«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԵՐԿՈՒ ԱԶԳԵՐԸ ԿԱՄՐՋՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հավանաբար, միայն Վրաստան պետությունում է հնարավոր ոչ պետական լեզվով հրապարակվող պարբերականը նշի իր հիմնադրման մեկդարյա հոբելյանը: Դա, բնականաբար, Վրաստանի, վրաց ժողովրդի ավանդական հանդուրժողականության, վրաց հողի հյուրընկալ յուրահատկության արգասիքն է: Վրաստանում ապրող այլազգիները, հատկապես հայերի՝ վրացական պետության շահերի պաշտպանության, դարեր առաջ վրացական հողում հաստատված եւ այդ հողի համար արյուն հղած մարդկանց ծառայությունն է: Թեեւ Վրաստանում ապրող հայերի նման տրամադրվածության ձեւավորման մեջ արտակարգ նշանակալի է «Վրաստանի» դերը, որը միշտ աչքի է ընկել օբյեկտիվ, ստույգ, հրատապ տեղեկատվության հրապարակումով, լավին լավն ասելու եւ հակոտնյա երեւույթները տեսանելի դարձնելու ունակությամբ: Մեծ է թերթի դերը նաեւ վրաց-հայկական բարեկամական կապերի ամրապնդման ու խորացման գործում: Զուր չէ, որ շատ հաճախ «Վրաստանը» անվանում են վրաց-հայկական բարեկամության կամուրջ:

Սիրելի «վրաստանցիներ»՝ բարեկամության կամրջի հենսյուներ, կրկին շնորհավորում եմ պարբերականի մեկդարյա հոբելյանի առթիվ: Միշտ այդպես շարունակեք կամավոր ստանձնած պատմական առաքելությունը, ծառայեք Վրաստանին, Հայաստանին, վրաց-հայկական բարեկամության մեծ գործին:

ԻՐԱԿԼԻ ԿՈՎԶԱՆԱՁԵ
Վրաստանի խորհրդարանի ֆինանսա-բյուջետային կոմիտեի նախագահ

ՍԻՐԵԼԻՆԵՐՍ, ՇՆՈՐՀԱՎՈՐ ԹԵՐԹԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հպարտ եմ, որ ժանակին աշխատել եմ այնպիսի բազմավաստակ լրագրողների հետ, ինչպիսիք էին Բենիկ Սեյրանյանը, Նորայր Երթեւցյանը, Սոս Սիմավորյանը, Վլադիմիր Պողոսյանը, Մրազ Ջաֆարովը, Վաչագան Գեւորգյանը, Ռուբեն Թորոսյանը, Միքայել Աղամյանը եւ ուրիշներ: Ցավոք, նրանց մեծ մասը այսօր չկա, թեպետ տասնամյակների ընթացքում «Վրաստանում» հաստատված ավանդույթը այսօրվա աշխատակիցները մեծ պատասխանատվությամբ են շարունակում:

Տեղափոխվելով Մոսկվա՝ կարծես կտրվեցի հարազատ միջավայրից: Եթե Թբիլիսիում գրեթե ամեն օր շփվում էի թերթի աշխատակիցների հետ, ապա Մոսկվայում զրկվեցի դրանից: Բարեբախտաբար, ինչպես տեղեկացա, թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի նախաձեռնությամբ, համացանցում սկսեցին հրապարակել թերթի էլեկտրոնային տարբերակը, ինչը առանձնակի բավականություն պատճառեց ինձ, քանի որ կրկին կարծես հայտնվեցի հարազատ միջավայրում, ձեր կողքին, թանկագին «վրաստանցիներ»: Այսօր, ապրելով Մոսկվայում, առանձնակի բերկրանք եմ զգում, երբ համացանցի կայքով կարողանում եմ կարդալ այն բոլոր նյութերը, որոնք տպագրվում են «Վրաստանում»: Նաեւ իմ շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել «Ալիք Մեդիային»՝ յուրաքանչյուր շաբաթ թերթի տեսությունը իր կայքում զետեղելու համար: Այդ ամենը կրկին անգամ վկայում է, որ մեր մեկդարյա «Վրաստանը» ապրում եւ գործում է ու հուսով եմ, որ մեր սիրելի պարբերականը կգոյատեւի, եւ մեր թոռներին էլ բախտ կվիճակվի շնորհավորել «Վրաստանին»՝ հերթական հոբելյանի առիթով:

ԱԼԻՆԱ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ
«Վրաստան» թերթի նախկին աշխատակցուհի
Ք. Մոսկվա

ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԻՄ ԵՐԱԶԱԾ ԲՈՒՀՈՒՄ

«ԲՈՒՀԸ ԻՆՁ ՍՈՎՈՐԵՑՐԵՑ ՆԱԵՎ, ՈՐ ԵՍ ԻՆՁ ՉԳԱՄ ԵՐԿՐԻ ԼԻԱՐԺԵՔ ՔԱՂԱՔԱՑԻ»

Այսօր, հզոր պետությունների մրցունակ աշխարհում ապրող հինավուրց ու փոքր մեր երկիրը, որ հայտնվել է «Կովիդ-19» համավարակի շրջանակում, առավել, քան երբեւէ, ունի կիրթ ու կարողունակ երիտասարդության պահանջ: Մեր պետությունը մշտապես ու այժմ առավել, քան երբեւէ, շարունակում է լինել առաջադեմ ուսանողի լավագույն գործընկերը, աջակիցն ու հովանավորը: Դրա հավաստիացումը նաեւ պետական «1+4» կրթական ծրագիրն է, որը Վրաստանի ազգային փոքրամասնություններին ընձեռում է վրացական բուհերում ուսանելու արտոնություններ: Մեր թերթի՝ «Ես սովորում եմ իմ երազած բուհում» խորագիրը, ինչպես գիտենք, նվիրված է վրացական բուհի մեր երկրի հայկական դպրոցներն ավարտած ուսանողներին, իսկ նպատակը ուսուցման գործընթացում նրանց ունեցած հնարավոր դժվարությունների, դրանց հաղթահարման ու հաջողությունների, բուհական կրթության արդյունքում ձեւավորված նրա քաղաքացիական ու մարդկային կերպարի բացահայտումն է:

Խորագրի հերթական հյուրը Ծալկայի հայկաբնակ Օգնի գյուղի բնակիչ, Թբիլիսիի Միլենիում համալսարանի բիզնեսի եւ սոցիալական գիտությունների ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Ալբերտ Հանեսյանն է:

- Ալբերտ, բոլորիս հայտնի է, որ վրացահայ գյուղաբնակ երիտասարդությունը չի տիրապետում վրացերենին, բայց դու այսօր սովորում ես վրացական բուհում, վրացերեն...

- Վրացերենին տիրապետելու խնդրում ինձ, նախեւառաջ, օգնեց վրացերեն գիտենալու ցանկությունս, երեւի բոլորի մոտ է այդպես՝ ներքին ցանկությամբ է սկսվում... Այդ ուղղությամբ առաջին քայլս Թբիլիսիի «Իմեդի» քոլեջում սովորելն էր: Ապա, քոլեջում լեզվի յուրացման ուղղությամբ նկատելի առաջընթացիս՝ քոլեջն ավարտելուց հետո, ընդունվեցի Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան համալսարանի զրո կուրս, ինչը արդեն վրացերենի ծրագրավորված ուսուցում էր ապահովում: Հիմնականում զրո կուրսի շնորհիվ էլ այսօր կարողանում եմ ազատ շփվել ու հաղորդակցվել վրացերենով:

- Իսկ ինչպե՞ս եղավ, որ Ջավախիշվիլու համալսարանից հայտնվեցիր Թբիլիսիի Միլենիում համալսարանում:

- Պարզապես հասկացա, որ ատամնաբուժության ֆակուլտետը, ինչը նախապես ընտրել էի Ջավախիշվիլու համալսարանում, չի բերի աշխատանք գտնելու այն հնարավորությունները, ինչ ներկայիս՝ Միլենիում համալսարանը: Կարծում եմ, որ բիզնեսի ու սոցիալական գիտությունների ֆակուլտետն ինձ ավելի էր ձգում, ավելի եկամտաբեր է: Իսկ ես, ինչպես իմ բոլոր հասակակիցները, ուզում եմ նյութապես անկախ լինել, ապահովել ծնողներիս ծերությունը...

- Արդեն երեք տարի՝ վրացալեզու համալսարանի ուսանող ես: Այդ ընթացքում, վրացական շրջապատի հետ շփվելիս, այդ շրջապատին ընտելանալու, համակուրսեցիների, դասախոսական կազմի հետ հաղորդակցվելու անհրաժեշտությունն ինչպե՞ս էր հաղթահարվում, ի՞նչն էր ստացվում, ի՞նչը՝ ոչ...

- Կարեւորը անկաշկանդ հոգեվիճակն է, նախօրոք ներողություն խնդրիր հնարավոր սխալներիդ համար եւ ինտենսիվ ինքդ քեզ վրա աշխատիր, գտիր սխալ արտահայտություններիդ ճիշտ տարբերակները: Օրինակ, ես ուշադիր հետեւում էի ընկերներիս զրույցներին, փորձում էի մտապահել նոր բառերը եւ դրանք օգտագործել իմ խոսքում:

- Եթե հարկ լինի, կկարողանա՞ս ելույթ ունենալ վրաց հասարակության առջեւ, խոսել բեմից:

- Անկեղծ ասած, նման առիթ չեմ ունեցել, բայց եթե անհրաժեշտ լինի, կարծում եմ՝ կկարողանամ ասելիքս տեղ հասցնել. ինձ համար, երեւի, խնդիրը ոչ թե վրացերեն արտահայտվելը, այլ հասարակության հետ դիմադարձ գտնվելու բարդույթն է, կաշխատեմ այդ ուղղությամբ փորձ ձեռք բերել, որովհետեւ հասարակության առջեւ ելույթը, իրոք որ, շատ կարեւոր է՝ տվյալ լեզվի իմացության ամրապնդման եւ ինքդ քեզ ավելի ինքնավստահ զգալու առումով:

- Իսկ 3-րդ կուրսի 1-ին եւ 2-րդ կիսամյակների քննություններդ հանձնելիս՝ ո՞ր առարկայից էիր առանձնապես տագնապում, ի՞նչ արդյունքներով փոխադրվեցիր չորրորդ կուրս:

- Քննությունները, կորոնավիրուսի համաճարակի պատճառով, հանձնեցինք օնլայն ռեժիմով: Ինձ համար նորմալ անցավ, գնահատականներս միջինից բարձր էին, իհարկե, կարող էր ավելին լինել...

- Իսկ ինչպիսի՞ն է դասախոսների վերաբերմունքը ոչ մայրենիով սովորող ուսանողի նկատմամբ՝ խստրակա՞ն, անաչա՞ռ, ներողամի՞տ, թե՞ օբյեկտիվ:

- Խստրականություն երբեք չեմ զգացել, հակառակը՝ հնարավորինս ընդառաջում են, որ դու քեզ զգաս տվյալ օջախի լիարժեք անդամ:

- Լեզվին լավ չտիրապետելը, շրջապատին միանգամից ինտեգրվելը, երեւի թե, դժվար է. քեզ մոտ ինչպե՞ս հաղթահարվեց նման պարագաների համար հավանական կաշկանդվածությունը:

- Ինչպե՞ս եւ ե՞րբ՝ չեմ կարող ասել. պարզապես մի օր զգացի, որ խոսելիս չեմ լարվում, բառեր չեմ փնտրում: Դա ժամանակի հարց է, ես անցել էի «Իմեդիի» քոլեջը, Ի.Ջավախիշվիլու համալսարանի զրո կուրսը, որտեղ ինձ տրվել էր ծրագրավորված ուսուցում: Իր դերն է կատարում նաեւ այն, որ ես, աշխատանքի բերումով, ուսմանս զուգահեռ շարունակ աշխատել եմ առեւտրի ցանցում, իսկ այժմ աշխատում եմ Ծալկայի «Կրեդո» բանկում՝ որպես խորհրդատու, մշտապես շփվում-խոսում եմ վրացերեն:

Այս պարագայում ամենակարեւորը, կարծում եմ, շրջապատի՝ քեզ որպես իր լիարժեք անդամը տեսնելու ցանկությունն է: Իսկ այդ ցանկությունը իմ հանդեպ շարունակաբար եղել է, եւ այդ բարյացակամությունն էլ, երեւի, ինձ օգնել է լինել անկաշկանդ:

- Ի՞նչն է քեզ դուր գալիս քո նոր վրացի բարեկամների մեջ:

- Գնահատում եմ նրանց անկեղծությունն ու ընկերասիրությունը:

- Ինչպե՞ս ես պատկերացնում քո աշխատանքային ապագան:

- Աշխատանքային ապագաս, երեւի, պետք է լինի հաճելի եւ օգտակար թե՛ ինձ, թե՛ ընտանիքիս, թե՛ մեր երկրի համար...

- Ինչպիսի՞ն ես ուզում տեսնել Վրաստանն ու մեր պատմական Հայրենիքը՝ Հայաստանը:

- ...Որ մեկընդմիշտ նրանց կյանքից չքվի կորոնավիրուսը: Որ նրանց գլխավերեւում միշտ ժպտա խաղաղ երկինքը: Որ հայն ու վրացին ապրեն աշխարհի հետ համերաշխ, իրենց պատմական նկարագրին բնորոշ՝ արարող ու ստեղծագործ կյանքով: Որ բազմանան ու շարունակեն կերտել իրենց բիբլիական ու բարի երկրները:

- Շնորհակալություն անկեղծ զրույցի համար, Ալբերտ, թող իրականանան քո բոլոր ցանկությունները:

Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՏԱՔՍՈՒ ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ՀԱԲՌԳԵԼ ԵՆ...

Օգոստոսի 14-ից, միջգերատեսչական համակարգող խորհրդի կողմից հասարակական տրանսպորտի երթեւեկության վրա սահմանած սահմանափակումից հետո, Թբիլիսիում տաքսու սպասարկումից օգտվելու սակագինն ավելացել է գրեթե 80 տոկոսով: Տաքսի ավտոմեքենաների ընկերություններն ու մասնավոր տաքսու վարորդները, օգտվելով առիթից, աննախադեպ գումարներ են պահանջում քաղաքացիների տեղաշարժի համար, ինչը ֆինանսական առումով բավականին ծանր բեռ է առանց այդ էլ նյութապես տուժած բնակչության ուսերին:

Ինչպես խոստովանում են տաքսու վարորդները, գնաճը պայմանավորված է հասարակական տրանսպորտի երթեւեկության դադարեցմամբ:

- Պահանջարկն ավելացել է, փողոցներում խցանումներ են, հետեւաբար, երթեւեկության տեւողությունը եւս ավելացել է, եւ այս պատճառով ընկերությունը որոշել է ավելացնել սակագները,- հայտարարեց տրանսպորտային «Բոլտ» ընկերության վարորդը, իսկ «Յանդեքս» տաքսու վարորդի խոսքով, ընկերությունը սպասարկման սակագինն ավելացրել է 50-60 տոկոսով:

Ինչ վերաբերում է մասնավոր տաքսիներին, ապա դրանց վարորդները ուղեվարձը ավելացրել են 60-70 տոկոսով:

Ավելացնենք, որ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Վրաստանի տարածաշրջաններում գրեթե նույն վիճակն է: Այստեղ էլ տաքսու սպասարկումից օգտվելը թանկացել է 50-60 տոկոսով:

Ինչպես հայտարարեց «Վրացական տաքսի» ընկերության հիմնադիր էդուարդ Լոմիձեն, սակագների ավելացումը պայմանավորված է հասարակական տրանսպորտի աշխատանքի դադարեցմամբ, եւ դա կշարունակվի մինչեւ սահմանափակման վերացումը եւ, եթե դրությունը չփոխվի, ապա բացառված չէ, որ տաքսի ծառայության սակագները սահմանեն նոր ռեկորդներ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

COVID - 19

«ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆՔ»

ՄԻԱԿ ԵԼՔԸ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԿՐՈՒՄՆ Է ԵՎ ԱՆՅՈՒՄԸ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Կորոնավիրուսի տարածման եւ վարակից մահացությունների թվի վերջին օրերի վիճակագրությունը լուրջ մտահոգության պատճառ են: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը միջոցներ է ձեռնարկում վարակի տարածումը կանխելու, վարակվածներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

Մասնավորապես, համակարգող խորհրդի որոշմամբ, կրկին պարտադիր դարձավ բաց տարածքներում պաշտպանիչ դիմակ կրելը, խստիվ արգելքներ սահմանվեցին հարսանիքների, հոգեհացերի եւ մարդաշատ այլ միջոցառումների անցկացման հարցում: Սահմանափակումներն առնչվեցին նաեւ ռեստորանների, սրճարանների, ժամանցի այլ վայրերի գործունեությանը:

Ինչ վերաբերում է արդեն վարակվածներին բժշկական օգնության ցուցաբերմանը, ապա Վրաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, հիվանդանոցները գործում են ծայրահեղ ծանրաբեռնվածությամբ, հիմնախնդիրներ են ծագում նաեւ հիվանդանոցներում վարակվածների մահճակալների առանձնացման հարցում: Գերատեսչությունը ստիպված էր Թբիլիսիում, երկրի մյուս քաղաքներում ձեռնամուխ լինել դաշտային հիվանդանոցների բացմանը, ինչը թույլ կտա թեթեւացնել կորոնավիրուսի դեմ պայքարում ներգրավված կլինիկաների ծանրաբեռնվածությունը:

Մասնագետների համոզմամբ, վարակի տարածման ծավալների աճը պայմանավորված է քաղաքացիների համակարգող խորհրդի սահմանված կարգավորումների անտեսումով: Պաշտպանիչ դիմակներ կրելու խստիվ հանձնարարականի կատարումը վերջին 2 շաբաթվա ընթացքում 73-ից հասել է 50 տոկոսի:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության հավաստմամբ, պատվաստումը կորոնավիրուսի վարակի դեմ հաղթանակի միակ ելքն է: Հետեւելով ԱՀԿ-ի հանձնարարականներին՝ Վրաստանի կառավարությունը բնակցություններ է վարում աշխարհում լայն ճանաչման արժանացած պատվաստանյութ արտադրող բոլոր ընկերությունների եւ երկրների հետ: Վրաստանը ապահովվել է բավարար քանակության 4 տեսակի պատվաստանյութի դեղաչափով: Տվյալ պարագայում հիմնախնդիրը պատվաստման գործընթացի ակտիվացումն է: Մասնագետների հաշվարկներով, չափահաս բնակչության 75-80 տոկոսի պատիվաստման դեպքում, հնարավոր կլինի խոսել

վարակի հաղթահարման մասին, իսկ դրա համար Վրաստանի բոլոր քաղաքներում եւ մունիցիպալիտետներում գործող պատվաստման կենտրոններում օրական պատվաստում պետք է անցնի շուրջ 30 հազար մարդ, այն դեպքում, երբ ներկայիս տվյալներով (առանձին բացառություններով) պատվաստվող անձանց թիվը չի գերազանցում 20 հազարը: Կորոնավիրուսի դեմ այքարում հաղթանակի միակ երաշխիքը պատվաստումն է:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ Է

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի՝ օգոստոսի 27-ի տվյալներով, Վրաստանում իրականացվել է 1 095 069 պատվաստում:

Միեւնույն ժամանակ, պաշտոնական տվյալների համաձայն, վերջին 24 ժամվա ընթացքում պատվաստվել է 26 418 մարդ: Բացի այդ, մեկ դեղաչափով պատվաստվել է 749 754, իսկ լիարժեք պատվաստում է անցել 345 315 մարդ:

Ինչ վերաբերում է նոր դեպքերին, Վրաստանում վերջին մեկ օրում հայտնաբերվել է կորոնավիրուսի 4 031 նոր դեպք, ապա-

քինվել է 4 585 հիվանդ, մահացել՝ 73 վարակակիր:

ԵՐԵՔ ԱՄՍԻՑ ԿԼԻՆԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՆՈՐ ԱԼԻՔ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տնօրեն Թեդրոս Ադանոմ Հեբրեյսուսը կոչ է անում աշխարհին առաջիկա երեք ամիսներին պատրաստվել նոր գլոբալ համավարակին: Այս մասին նա ասել է ժնեւում կայացած ճեպազրույցի ժամանակ:

- Առաջիկա երեք ամիսները կրիտիկական ժամանակաշրջան կլինեն մոտալուտ համավարակին նախապատրաստվելու եւ դրան արձագանքելու համար,- հայտնել է Հեբրեյսուսը:

Նա նշել է, որ աշխարհում իրավիճակը կայունացել է, սակայն հիվանդացությունն ու մահացությունը մնում են շատ բարձր մակարդակի վրա:

Հիշեցնենք, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը կորոնավիրուսը որպես համավարակ էր ճանաչել 2020 թվականի մարտի 11-ին: Չինաստանում վարակը սկսվել էր տարածվել 2019 թվականի դեկտեմբերին: ՉԺՀ-ն հաստատել է, որ կորոնավիրուսը վարակիչ է, եւ հունվարի 21-ին երկու քաղաքում հայտարարվել էր կարանտին:

Վրաստանում կորոնավիրուսի առաջին դեպքը հայտնաբերվել է 2020 թվականի փետրվարի 26-ին:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ՊՇՌ» ԵՎ ՀԱԿԱԳԵՆԻ ԹԵՍՏԵՐԸ ԿԴԱՌՆԱՆ ՎՃԱՐՈՎԻ»

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն ասում է, որ կորոնավիրուսի «ՊՇՌ» եւ հակագենի արագ թեստերը կարող են այլեւս անվճար չլինել:

Բացի այդ, Հիվանդությունների վերահսկման կենտրոնը բարձրացրել է համակարգող խորհրդի նախաձեռնությունը, որը թույլ կտա որոշակի հաստատություններ մուտք գործել պատվաստման կամ թեստի բացասական արդյունքի դեպքում:

- Հիվանդությունների վերահսկման կենտրոնը առաջ է քաշել մեր առաջարկը: Սա նոր հեծանիվ չէ: Գիտեք, շատ երկրներ արդեն օգտագործում են դա՝ տարբեր հաստատություններ մուտք գործելիս, ինչպիսիք են հյուրընկալող հաստատությունները, սրճարանները, ռեստորանները, գեղեցկության սրահները, մարզասրահները եւ այլն: Արեւմտյան երկրներում, որտեղ պատվաստումների ծածկույթը բարձր է, նրանք թույլ են տալիս մուտք գործել միայն լիարժեք պատվաստվածներին, բայց մինչեւ մենք կհասնենք 10 տոկոսի, այժմ մեր բնակչության մոտ յոթ տոկոսն է պատվաստված: Մինչեւ 10 տոկոսի հասնելը, մենք թույլ կտանք մեկ անգամ պատվաստված անձին թույլատրել մուտք գործել փակ տարածք, առանց լրացուցիչ միջոցների, կամ եթե նա չի պատվաստվել, ապա նա պետք է ունենա 72 ժամվա ընթացքում արված «ՊՇՌ» թեստի բացասական պատասխան, կամ վերջին 24 ժամվա ընթացքում հակագենի թեստ: Մենք բարձրացրել ենք այս հարցը: Հավանաբար, խորհուրդը նորից կքննարկի: Ուզում եմ ընդգծել, այս 24-ժամյա եւ 72-ժամյա թեստերն այլեւս չեն արվի պետության հաշվին: Պետությունը թույլ է տալիս բնակչությանը անվճար պատվաստվել, բայց եթե մենք չենք պատվաստվել եւ ցանկանում ենք գնալ ռեստորան, ցանկանում ենք այցելել այս հաստատություններ, ապա բարի լինենք եւ վճարենք թեստավորման համար ձեր կամ ձեր գործատուի հաշվին,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 215 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 215 543 606-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 489 961-ը: Ապաքինվել է 192 719 199 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **39 342 153** դեպք: Այստեղ մահացածների թիվը **651 956** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **32 603 188**-ի, մահացածներինը՝ **436 889**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **20 676 561**, մահացել՝ **577 605** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **6 844 049**, վարակի հետեւանքով մահացել՝ **180 041** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Արգենտինան, Կոլումբիան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **240 261**-ի, մահացածներինը՝ **4 796**-ի, ապաքինվածներինը՝ **225 593**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **405 542** մարդ: Վարակից մահացել է **5 434,** ապաքինվել՝ **353 140** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **536 202,** մահացել՝ **7 101** (այդ թվում՝ **13** հղի կին), ապաքինվել՝ **473 502** մարդ:

*Օգոստոսի 27-ին կորոնավիրուսով վարակման **4 031** նոր դեպքերից **1 639-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 449, Իմերեթիում՝ 493, Քվեմո Քարթլիում՝ 247, Շիդա Քարթլիում՝ 222, Գուրիայում՝ 127, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 294, Կախեթիում՝ 343, Մցխեթա-Մթիանեթիում՝ 83, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 34, Սամցխե-Ջավախեթիում՝ 100:***

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿԱԶՄՈՒՄ Է 1,3 ՏՈԿՈՍ

ՎՐԱՍՏԱՆԸ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՎ ԱՌԱՋԻՆՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի տեղեկատվությամբ, Վրաստանում կորոնավիրուսից մահացության մակարդակը կազմում է 1,3 տոկոս, եւ, երկրում ստեղծված բարդ համաճարակային իրավիճակից ելնելով, վարակից մահվան դեպքերի թվի նվազում դեռ չի սպասվում:

Համավարակի սկզբից ի վեր Վրաստանում կորոնավիրուսից մահացածների թիվը գերազանցել է 7000-ը եւ կազմում է 7 028 մահվան դեպք: Միաժամանակ, միայն օգոստոսին՝ վիրուսի տարածման «չորրորդ ալիքի» ընթացքում, Վրաստանում մահացել է 1212 կորոնավիրուսով վարակված պացիենտ:

- Առայժմ մահացության թվի նվազում չի սպասվում: Ակնկալվում է, որ մահերի թիվը կլինի 1,3 տոկոսին (վարակվածներից) համաչափ, ինչին մենք պետք է սպասենք: Այլ ելք բժշկությունը չի կարողացել գտնել, որպեսզի մահացությունը նվազի,- ասաց Թամար Գաբունիան:

Ավելացնենք, որ Վրաստանը առաջին տեղումն է աշխարհում օրուգիշերվա մահացության միջին մակարդակով: Ինչպես տեղեկացրել է «The New York Times (NYT)» կայքը, վարակման մեկօրյա միջին ցուցանիշը Վրաստանում կազմում է 4908, իսկ մահացությունը՝ 46,9, ինչը 100 հազար բնակչի հաշվով կազմում է 1,26 տոկոս:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ ԿԺԱՄԱՆԻ ԹԲԻԼԻՍԻ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 8-ին պաշտոնական այց կկատարի Վրաստան:

Այդ մասին Հայաստանի վարչապետը հայտնեց օգոստոսի 24-ին Ազգային ժողովում կառավարության ծրագրի քննարկման ժամանակ ունեցած ելույթում:

Հայաստանի վարչապետն ընդգծեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու շահագրգիռ գործունեությունը հայ-վրացական տնտեսական համագործակցությունն ակտիվացնելու գործում:

- Չեմ կարող չհիշատակել վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու անձնական ներդրումը հունիսի 12-ին մեր գերիների վերադարձը կազմակերպելու գործում,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ 31-ԱՄՅԱԿԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Անկախության հռչակագրի տարեդարձի առիթով շնորհավորական ուղեձներով երկրի բնակիչներին շնորհավորեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Անցած երեք տասնամյակների ընթացքում մենք անցել ենք բազում փորձությունների միջով, ունեցել՝ հաջողություններ, նաեւ դժվարություններ ու ձախողումներ: Ու կարեւոր է ընդգծել, որ ամուր ու ինքնիշխան պետականություն ունենալու մեր կամքն անսասան է, եւ այդ կամքը պետք է արտահայտվի պետությունն ու պետական ինստիտուտները կայացնելու, ուժեղացնելու մեր ամենօրյա աշխատանքում:

Մենք Անկախության հռչակագիրն ընդունած սերնդի ներկայացուցիչն ենք, եւ սա պատմական առաքելություն է մեզ համար: Այս առաքելությունը մեզնից յուրաքանչյուրի վրա դնում է առանձնահատուկ պատասխանատվություն»,- ասված է վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձում:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Օգոստոսի 24-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովի ամբիոնից պատգամավորներին ներկայացրեց իր գլխավորած կառավարության 2021-2025 թվականների գործունեության ծրագիրը:

Կառավարության ծրագրի նախաբանում վարչապետը նշեց, որ ընտրողների մեծամասնության առաջ Կառավարությունն ունի երկու պարտավորություն՝ 1-ինը օրենքի եւ իրավունքի դիկտատուրա հաստատելը, 2-րդը՝ Հայաստանի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման խաղաղ դարաշրջան բացելը:

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, նրա ձեւավորած Կառավարությունը Հայաստանում օրենքի եւ իրավունքի դիկտատուրա հաստատելու մանդատ է ստացել ժողովրդից եւ անշեղորեն կյանքի է կոչելու այդ մանդատը: Պետք է արձանագրենք, որ Կառավարության ծրագիրը ձեւավորվել է հենց այս երկու հիմնական անելիքի համատեքստում: Մնացած ամեն ինչը, ըստ էության, ուղղակի կամ անուղղակի առնչվում է այս երկու հիմնաքարերի հետ, եւ կառավարությունը գործելու է հենց այս տրամաբանությամբ,- ասաց վարչապետն ու հավելեց, որ Հայաստանի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելը, այնուամենայնիվ, արտահերթ ընտրությունների արդյունքներով ժողովրդի առաջ Կառավարության ստանձնած մեծագույն առաքելությունն է:

ՏՀԱՃ ՄԻՋԱԴԵՊ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Ազգային ժողովում կառավարության գործունեության ծրագրի քննարկումը հանգեցրեց խորհրդարանում պատգամավորների միջեւ ֆիզիկական բախման: Խորհրդարանականները նաեւ շշեր են նետել միմյանց վրա:

Միջադեպի պատճառը իշխող «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավոր Հայկ Սարգսյանի ելույթն էր, որն անուղղակիորեն պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին «դավաճան» անվանեց, որին հաջորդեց Սարգսյանի ուղղությամբ ջրով լի շշի նետումն ու վիճաբանությունը:

Խրավիճակը լարվեց նաեւ Ազգային ժողովի ամբիոնից «Հայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Հակոբյանի ելույթի ժամանակ, երբ պատգամավորներից մեկը տեղից արձագանքեց Վահե Հակոբյանին, իր հերթին Վահե Հակոբյանն արձագանքեց. «Արա-ն դու ես, ա՜յ տվար»:

Այդ արտահայտությունից հետո նորից խորհրդարանում իրավիճակը թեժացավ:

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը կրկին ընդմիջում հայտարարեց:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐԱԿՇՌՈՒՄ Է «ԴԵԼՏԱ» ՇՏԱՄԸ

Հայաստանում այս պահին ընթանում է հիվանդանոցային մահճակալների ծավալման գործընթաց, քանի որ գրանցվում է կորոնավիրուսային հիվանդության թվի աճ: Այդ մասին հայտարարեց Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

- Այժմ նկատվում է կորոնավիրուսային հիվանդության երիտասարդացում եւ ընթացքի ավելի կտրուկ վատթարացում, այսինքն՝ կունենանք հոսպիտալացման ավելի երկար օրեր,- նշեց Անահիտ Ավանեսյանը եւ հավելեց, որ այժմ Հայաստանում շրջանառվող գերակշիռ շտամը «դելտա» շտամն է:

- Եթե 60 հետազոտությունից 50-ից ավելին «դելտա» շտամն է, դա նշանակում է, որ այն բավական ագրեսիվ շտամ է: Սիմպտոմների առումով մի փոքր տարբերություն նկատում են մասնագետները: Շատ դեպքերում համի եւ հոտի զգացողությունը չեն կորցնում: Այն ավելի հարբուխային սիմպրոմներ ունի, ինչն անգլիական շտամին այդքան էլ բնորոշ չէ,- շեշտեց նախարարը:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՊԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻՆ

Օգոստոսի 23-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նիստին, որն անցկացվել է տեսակապի միջոցով:

Նիստին մասնակցեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների՝ Ռուսաստանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի ղեկավարները, ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը, որպես հրավիրյալ՝ Ուզբեկստանի նախագահը:

Նիստի ընթացքում ՀԱՊԿ առաջնորդները քննարկեցին Աֆղանստանում ստեղծված իրավիճակին առնչվող հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի հայտարարությամբ, Հայաստանը եւս 2 տեղով լավացրել է տնտեսական ազատության աշխարհի ինդեքսում իր դիրքը:

- Այժմ 32-րդ ենք: Կարեւոր է նաեւ այն, որ ԵԱՏՄ տարածքում ամրապնդում ենք ամենալավ բիզնես միջավայր ունեցող երկրի դիրքը: Չենք գոհանում արդյունքներով, դեռ շատ բան կա լավացնելու բիզնեսի համար, ինչը խոստացել ենք կառավարության նոր ծրագրով,- նշեց նախարարը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՍԿՍՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

Հայաստանի հանրակրթական դպրոցներում ուսումնական առկա գործընթացը 2021-2022 ուսումնական տարում կիրականացվի օրումեջ, կլինեն նաեւ որոշ փոփոխություններ:

Բոլոր դպրոցներն այս տարի դասընթացները կիրականացնեն օրումեջ, եթե աշակերտների քանակը 20-ից ավելի է:

Դպրոցներում կպահպանվի դիմակներ կրելու ավանդույթը, ինչպես նաեւ կշարունակվի ախտահանման գործընթացը: Ներկայում միջազգային գործընկերների հետ աշխատանքներ են տարվում ու քայլեր են ձեռնարկվում, որպեսզի դպրոցներն ապահովվեն անհատական պաշտպանիչ ու ախտահանող միջոցներով:

ԿԼԻՆԻ 37 ՀԱԶԱՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԵՑԻ

2021-2022 ուսումնական տարում Հայաստանի ողջ տարածքում, ընդհանուր առմամբ, առաջին անգամ դպրոց կգնա շուրջ 37 հազար երեխա:

Այդ երեխաներն անցել են հայտագրման փուլը, ընդունելության վերջնական թվերը կճշգրտվեն: Ծնողները հայտագրումից հետո պայմանագիր ստորագրելու փուլ են անցնում, այնպես որ, հստակ թվերը կհրապարակվեն մինչեւ սեպտեմբերի սկիզբը:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՄԵՆՆԵՐԸ ՉԵՆ, ԱՅԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԻՑ ԵԿԱԾ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԸ»

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր եւ գործարար Խաչատուր Սուքիասյանը տարօրինակ անվանեց իշխանությունների հասցեին արված կոռուպցիայի եւ անհեթեթ կառավարման մասին ընդդիմության մեղադրանքները, որը ոչ հեռավոր անցյալում այդ առումով «բավականին մեղքեր» ուներ:

Ն մ ա ն հայտարարությամբ նա հ ա ն դ ե ս եկավ խորհրդարանական ամբիոնից՝ դիմելով «Հայաստան» դաշինքից պատգամավոր Արմեն Գեւորգյանին, ով Ռոբերտ Քոչարյանի օրոք նախագահական աշխատակազմի ղեկավարն էր, իսկ Սերժ Սարգսյանի օրոք՝ փոխվարչապետը:

- Պարոն Գեւորգյան, Դուք երբեւէ զբաղվե՞լ եք գործարարությամբ: Երբեք: Այդ դեպքում որտեղի՞ց ունեք սեփականության 57 վկայագրեր միայն Երեւանի կենտրոնում... Հայրս եւ մենք՝ չորս եղբայրներով տարիներ շարունակ գործել ենք բիզնեսում եւ դրանից հետո էլ չկարողացանք այդքան կուտակել,- հավելեց Սուքիասյանը («Սիլ գրուպ» խոշորագույն բիզնես-հոլդինգի համասեփականատեր):

Նրա խոսքով, Սերժ Սարգսյանը պաշտոնը զբաղեցրեց ոչինչ չունենալով, իսկ հետո «իր համար ճարեց մենաթանկագին ժամացույցներն ու աքսեսուարները»:

- Այդ «ֆաբերժեների» եւ նման իրերի գինը զենքն էր, որը չէր գնվել, վատ կրթությունն ու չհանդերձավորված հիվանդանոցները: Ամենախոշոր օլիգարխները ոչ թե բիզնեսմեններն են, այլ հենց քաղաքագետները,- հայտարարեց Սուքիասյանը:

Պատգամավորի հավաստմամբ, նույն ապակայունությամբ կառուցվում էր ոչ միայն էկոնոմիկան, այլեւ երկրի արտաքին քաղաքականությունը՝ ոչ ոք չէր մտածում, թե ինչպես ամրացնել պաշտպանունակությունը եւ առավելագույնին հասնել Ղարաբաղյան հարցում:

- Բնականաբար, ընդդիմությունում կան մարդիկ, ովքեր լուրջ քաղաքականությամբ են զբաղված՝ օրինակ Արմեն Ռուստամյանը: Կան նաեւ ուրիշներ: Եկեք քննարկենք, հարգելով միմյանց եւ փորձել հասկանալ, թե ինչով կարող ենք օգնել երկրին,-հավելեց Սուքիասյանը:

Նշենք, որ 2008 թվականին, երբ Սուքիասյանը ընտրություններին բացեիբաց պաշտպանեց Լեւոն Տեր-Պետրոսյանին, նրա հարցով հայտարարվել էր փնտրտուք, նա զրկվեց նաեւ իր ձեռնարկություններից մեկից («Բջնի» հանքային ջրերի գործարանից): Մի քանի տարի հետո նա կարողացավ ընդհանուր լեզու գտնել իշխանության հետ եւ վերադառնալ բիզնես: Վերջին խորհրդարանի արտահերթ ընտրություններին նա զբաղեցնում էր չորրորդ հորիզոնականը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրացուցակում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ

29.08.2021 Հիշատակ Սուրբ Աստվածածնի գոտու գյուտի

Սուրբ Աստվածածնի գոտու գյուտը Տիրամորը նվիրված Հայ Առաքելական եկեղեցու յոթ տոներից է:

2.09.2021 Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Հոբ Արդարի հիշատակի օր

Հովհաննես Մկրտիչն Ավետարանների մեջ Հիսուս Քրիստոսից հետո ամենամեծ դեմքն ու գլխավոր գործիչն է:

Հովհաննեսն իր պատանեկությունն ու երիտասարդությունն անցկացնում է մենության մեջ, Աստծո ներկայությամբ ու շնորհներով: 30 տարեկանում գնում է քարոզելու Հորդանանի հովիտ` Տիրոջ գալուստը պատրաստելու` կոչ անելով ապաշխարության եւ արդարության:

Հերովդես արքան Հովհաննեսին բանտարկելու, ապա գլխատելու հրաման էր տվել եղբոր կնոջը հափշտակելու առիթով:

Հոբը, որ բնակվում էր Մեռյալ ծովի մերձակա լեռնային տարածքում «արդար էր ու աստվածապաշտ մարդ, ամեն տեսակի չար ու մեղավոր գործերից հեռու», մեծահարուստ էր` շրջապատված բազմաթիվ ծառաներով, սակայն հարստությունը չէր այլասերել նրան:

Հոբն Աստծո թողտվությամբ ենթարկվել էր մի շարք փորձությունների, բայց այնուհանդերձ չէր մեղանչել Աստծո դեմ: Դուրս գալով այս բոլոր փորձություններից` Հոբը նախկինից ավելի մեծ օրհնությունների է արժանացել: Հոբի կյանքը մեզ երկու կարեւոր ճշմարտություն է սովորեցնում, նախ` աշխարհի չարիքների կողքին մշտապես առկա է չարության ոգին, ապա` մարդու տառապանքները նպաստում են նրա կատարելագործմանը:

«ՆՈՐ ԱԼԻՔ - 2021»

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՍԱՐՈ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ` ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԻ ԴԱՓՆԵԿԻՐ

Սոչիում ավարտվեց «Նոր Ալիք 2021» մրցույթը, որի հաղթողը դարձավ Հայաստանը ներկայացնող երգիչ Սարո Գեւորգյանը:

Հայաստանի ներկայացուցիչը մրցութային 3 օրերին էլ աչքի է ընկել բարձր կատարողականությամբ: Վերջին` երրորդ օրը, Սարո Գեւորգյանը պրեմիերայով հանդես եկավ` կատարելով հատուկ իր համար գրված երգը: Երգի հեղինակը Դավիթ Բադալյանն է:

Հայաստանի ներկայացուցիչը, ընդհանուր հաշվարկով, հավաքել է 267 միավոր` երկրորդ տեղը գրաված մասնակցից առաջ անցնելով 6 միավորով:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ ՊԱՐԱՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՑ

Վրաստանի հավաքականի սայլակով սուսերամարտիկ Նինո Թիբիլաշվիլին հիանալի հանդես եկավ Տոկիոյի պարաօլիմպիական խաղերում:

Եզրափակչի ուղեգրի համար պայքարում վրացի մարզիկը մրցեց Ռիոյի պարաօլիմպիկական խաղերի բրոնզե մրցանակակիր, աշխարհի առաջնության մեդալակիր Եվգենյա Բրյուսը` Ուկրաինայից: Նինո Թիբիլաշվիլին կարողացավ հաղթել ուժեղ եւ փորձառու մրցակցին` 15:12 հաշվով:

Տոկիոյի պարաօլիմպիական խաղերի ոսկե մեդալի համար պայքարում Նինո Թիբիլաշվիլին հանդիպեց չինացի մարզիկ, Ռիոյի պարաօլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Բիան Ցզինի հետ:

Նինո Թիբիլաշվիլին եզրափակչում պարտվեց 7:15 հաշվով, այնուամենայնիվ, նա հասավ զգալի հաջողությունների եւ առաջին մեդալը բերեց Վրաստանի պարաօլիմպիական հավաքականին:

ԵՐԵՎԱՆՑԻ ԷԼԻՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ` ՇԱԽՄԱՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Հայաստանի կանանց հավաքականի առաջատար, գրոսմայստեր Էլինա Դանիելյանը հռչակվել է Եվրոպայի կանանց 2021 թվականի չեմպիոն:

Հայաստանի շախմատի ֆեդերացիան հայտնում է, որ այս հաղթանակը նորանկախ Հայաստանի պատմության մեջ առաջին նմանատիպ հաջողությունն է թե' կանանց, թե' տղամարդկանց շրջանում:

Է.Դանիելյանը նվաճել է նաեւ կանանց աշխարհի գավաթի խաղարկության ուղեգիր:

Ռումինիայի Յասի քաղաքում կայացած Եվրոպայի կանանց անհատական առաջնությանը մասնակցում էր 29 երկրի 117 շախմատիստուհի: Մրցաշարի մասնակիցների թվում էին 5 գրոսմայստեր, 22 կանանց գրոսմայստեր, 22 միջազգային վարպետ եւ 17 կանանց միջազգային վարպետ:

«ԱԼԱՇԿԵՐՏԸ»-Ը ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ՓԼԵՅ-ՕՖՖԻՑ

Օգոստոսի 26-ին Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆի պատասխան խաղում Հայաստանի չեմպիոն «Ալաշկերտը» Երեւանում ընդունել էր շոտլանդական «Ռեյնջերս»-ին: Հանդիպումն ավարտվեց զրոյական` ոչ-ոքի հաշվով, եւ նախորդ խաղում նվազագույն հաշվով պարտվելով` «Ալաշկերտ»-ը դուրս մնաց Եվրոպայի լիգայից ու հանդես կգա Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլում:

ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԿՈՍՈՎՈ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՆՑ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ

Միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, սեպտեմբերի 2-ին, աշխարհի առաջնության որակավորման փուլի շրջանակներում, Բաթումիի նոր մարզադաշտում Վրաստանի եւ Կոսովոյի ազգային հավաքականների ֆուտբոլային հանդիպումը կանցնի առանց հանդիսատեսի: Ընդ որում, նմանատիպ սահմանափակումները վերաբերում են նաեւ այլ սպորտային իրադարձություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՄՐՑԱԿԻՑԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԹԻՄՆ Է

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական փուլի շրջանակում, Հայաստանի հավաքականը սեպտեմբերի 2-ին, մրցակցի հարկի տակ, կխաղա Հյուսիսային Մակեդոնիայի, սեպտեմբերի 5-ին, մրցակցի հարկի տակ, Գերմանիայի եւ սեպտեմբերի 8-ին Երեւանում Լիխտենշտեյնի հավաքականների հետ: Առաջին երեք խաղերից հետո, Կապառոսի գլխավորած թիմը 9 միավորով J խմբի առաջատարն է:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հայ մեծ գրող Մահարու անունը: 4.Վրաց հայտնի ե՛ւ նկարիչ, ե՛ւ ռեժիսոր: 8.Հայ գրող, բանաստեղծ: 10.Հովհ.Թումանյանի հերոսներից: 11.Երկրաչափական վերաբերական: 13.«..., ..., իմ ճախարակ» (Պ.Աղայան): 15.Ստորադասական շաղկապ: 16.Ռուս հանրահայտ դերասանուհի ... Լուչկո: 18.Անորոշ դերանուն: 19.Սառը զենք: 21.Հայ մեծ զորավար: 24.«...ն ու տատրակը» (առակ): 27.Մաշտոցյան այբուբենի գիրը: 28....ացի, ...ական: 29.Վրացիների հացը: 31.Խաղողի տեսակ: 35.Ճահճում աճող բույս: 37.Արաքսի անվանումներից: 38.Վառ կարմիր: 39.Վրաց գրող, բանաստեղծ ... Փոցխիշվիլի: 41.Տեխնիկայի խանութ Թբիլիսիում: 42.Ծով ՌԴ հյուսիսում: 45.«Ինչպե-ս»` արեւմտահայերեն: 47.Լարել, փչացնել, խստացնել: 48.Ս.Փարաջանովի ֆիլմերից «...ի ամրոցի լեգենդը»: 50....լո, ...փիկո, ...մալի: 51.... մարդիկ, ... չափով: 53.Ժխտական նախածանց: 54.Հոգեւորական, քահանա: 56.Սրտի բժիշկ: 59.Բելգ..., Իսպան...: 60.Ֆ.Դոստոեւսկու վեպերից: 62.Գետ Վրաստանում: 63.... ու ոսկոր: 64.Րաֆֆու պատմավեպերից: 65.Շեքսպիրի հերոսներից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Լեռ, որտեղ խաչել են Քրիստոսին: 2.Բանաստեղծության տեսակ: 3.«Մատյան ողբերգության» կամ ...: 4.Արեւմտահայ գրող, Մեծ Եղեռնի զոհ: 5.Հարցական դերանուն: 6.Թռչնի տեսակ: 7.Բյուզանդացի կայսր: 9.Գեղեցիկ ծաղիկ: 10.Յոթերորդ նոտան: 12.Ճտեր գողացող թռչուն: 14.Օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 17.... Մանշ, ... Սկալա: 18.Ջաջուռում ծնված որմնանկարիչ: 20.Ժամանակի միավոր: 22.«Այլ ...» (ժողովրդական երգ): 23.Ռուսական ավտոմեքենա: 25.Շատ քիչ, սակավ: 26.Հունական այբուբենի տառ: 30.Հայոց այբուբենի տառ: 32.Հին Հռոմեացի պետական եւ քաղաքական գործիչ: 33.«Այնքան կաղին ..., որ» («Խոզն ու ագռավը» առակ): 34.Վրաց երգիչ Կիկաբիձեն «Միմինոյում»: 36.Ստ.Զորյանի գրական հերոսուհիներից: 40.Նորվեգացի խոշոր դրամատուրգ: 41.Ա.Ջիգրխանյանի հանգստի քաղաքը «Հարսնացու հյուսիսից» ֆիլմում: 43.Ծովափնյա ավան Աբխազիայում: 44.Լեզվի արատ ունեցող, թլիկ: 46.Ցեղասպանության զոհ ազգ: 49.Րաֆֆու վեպի հերոս: 52.Թա..., Կա..., Մա...: 53.Արմեն Տիգրանյանի օպերաներից: 55.Աստվածաշնչյան գետ: 57.Համադասական շաղկապ: 58.Երիտասարդ դերասան Ջանիբեկյանի անունը: 61.Շլդիկ, աչքի արատ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ստատիկա: 8.Պենզա: 9.Շվի: 10.Յալթա: 13.Չարազ: 18.Գեղի: 19.Աուտոդաֆե: 22.Սելեն: 23.Սատկած: 28.Նիցշե: 29.Պյուզր: 32.Շիա: 33.Արար: 34.Գալոպ: 37.Հրե: 39.Լուվր: 41.Ենոտ: 44.Ալոջ: 46.Սերո: 47.Ջահ: 49.Խալ: 50.Բաբայան: 52.Շուտո: 54.Հունար: 55.Ռիչի: 56.Ատ: 57.Շիճուկ: 58.Լաքա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆայլ: 2.Լիկա: 3.Լաշա: 4.Տպիչ: 5.Անդրե: 6.Քանզի: 11.Ասուս: 12.Թլոլ: 14.Ագուտի: 15.Աղվաշ: 16.Թան: 17.Գես: 20.Տելուր: 21.Դեկոր: 24.Անագ: 25.Կցել: 26.Ծերպ: 27.Աշուր: 30.Յաբու: 31.Զաիր: 35.Արես: 36.Որոր: 37.Հոլ: 38.Երջանիկ: 40.Վահան: 42.Ներու: 43.Տոյոտա: 44.Անարի: 45.Ոխառու: 48.Աբուռ: 51.Բաշ: 52.Շիլ: 53.Տաք:

Գլխավոր խմբագիր` ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ` ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու` ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը` ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5.
Մեր հասցեն` Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445